Մայիսյան

Մայիսյան բնակավայրի վարչական տարածքը 2062,73 հա, բնակչությունը 1634 մարդ: Գործում է միջնակարգ դպրոց, մանկապարտեզ, մշակույթի տուն, բուժամբուլատորիա:

Բնակավայրը գտնվում է Շիրակի դաշտում, մեղմաթեք հարթավայրում՝ ծովի մակարդակից 1660մ բարձրության վրա: Ունի սև տուֆի պաշարներ, որոնք ունեն արդյունաբերական նշանակություն: Գյուղում գտնվում է 7-րդ դարի Տիրանավոր Սուրբ Աստվածածին եկեղեցին: Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը երկրագործությունն է: Բնակչությունը զբաղվում է հացահատիկային, բանջարաբոստանային, կերային կուլտուրաների մշակությամբ, անասնապահությամբ, մեղվապահությամբ: